

Տեսուչ Հայր Սուրբին կողմէ տեսչարանին մէջ:

**Ուր. 4 Մեպ.**- Առաւօտեան ժամը 9-ին, կատարուեցաւ ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի վերաբացումը: Վերամուտի արարողութեան ներկայ էին Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներ և ուսուցչական կազմը, գլխատրութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի: Ըստ աւանդութեան՝ դարձեալ Աւետարան ընթերցուեցաւ, ապա Վարժարանի Տեսուչ Հոգշ. Տ. Թեոդորոս Վրդ. Չաքարեանի բարի գալուստի խօսքերէն ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը ժառանգաւոր սաներուն բաջալերեց իր հայրական խրատներով ու բարի երթ մարտնչ:

**Եշ. 10 Մեպ.**- Առաւօտեան ժամը 10-ին, Ամերիկայէն Նիւ Եորքի Ռեսպէսբըրը շրջանի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ նախկին հոգեւոր հովիւ, (այժմ հանգստեան կոչուած), Արժ. Տ. Գարեգին Աւագ Քհնյ. Գասպարեան, ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան և ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

**Բշ. 21 Մեպ.**- Երուսաղէմի Անկլիքան եկեղեցոյ Արքեպս. Գերշ. Տ. Սուիէլ Տաւանի այցելեց Պատրիարքարան և հանդիպեցաւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Նոյն օրը երեկոյեան ժամը 7-ին, Նոթր-Տամ հիւրանոցին մէջ, հիւրասիրութեամբ Երուսաղէմի Պատուոյ Հիւպատոս Պրն. Յուլակ Մոմճեանի, տօնախմբուեցաւ ԻԳ. տարեդարձը Հայաստանի Հանրապետութեան անկախութեան, որուն մասնակցեցաւ Լուսարարապետ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Միաբանութեան հոգեւորական հայրերուն:

**Դշ. 23 Մեպ.**- Նիւ Երսիէն Վանքիս հիւրն էր Արժ. Տ. Արշէն Ա. Քհնյ. Այվազեան:

**Ուր. 25 Մեպ.**- Հայաստանէն Արժ. Տ. Ժիրայր Քհնյ. Խաչատրեան, ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան և ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

**Գշ. 13 Հոկ.**- Շաքաբական այցելութեամբ Վանքիս հիւրն էր Հայաստանէն ժամանած Գերշ. Տ. Սիոն Եպս. Աղամեան:



## ՔԱՋԱԼԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ ԹՈՐՈՆԹՈՅԷՆ, ԳԱՆԱՍՍ

"The revival of 'SION' is a miracle in Diasporan national and cultural life. While print publications - including non-Armenian - are folding everywhere, you've done the impossible by producing a quality bilingual publication that is of interest to Armenians everywhere. The variety, the quality, the presentation are top notch. Congratulations. Knowing how difficult it is to produce such a publication at the best of times, I hesitate to recommend that it becomes a monthly. Patriarch Nurhan should be congratulated for bringing back the august publication. Congratulations also to veteran journalist and teacher Minas Kojayan for conceiving the editorial package of the revitalized 'SION' and for making it a marvelous addition to modern Armenian journalism."

Hagop Sarkissian  
Toronto

### Կարեւոր Յանձնում մը

**Ս**աղիմահայ պատմութեան աւելի ամրոցական պատկերը տալու նախանձախնդրութեամբ ընթերցողներու ուշադրութեան կը յանձնենք հետեւեալ պարագան, որ կ'առնչուի Յեղասպանութեան 100-րդ տարելիցին հետ:

ա.- Հարիւրամեակի ձեռնարկները ծրագրուած ու գործադրուած էին Միացեալ Յանձնախումբին կողմէ՝ հովանաւորութեամբ և նախագահութեամբ Երուսաղէմի Հայ Պատրիարք Ամեն. Տ. Նուրիան Արք. Մանուկեանի: Յանձնախումբը բաղկացած էր Սաղիմահայ երեք ակումբներու և Միաբանութեան ներկայացուցիչներէ:

բ.- Ձեռնարկներու շարքը սկսաւ Պարոնտէր կալուածին մէջ ձիթենիներու ծառատնկումով: Ելոյթներ ունեցան Տ. Արիս Արք. Շիրվանեան, Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան և Յակոբ Անդրեասեան:

գ.- Ապրիլ 23-24-ի երկօրեայ համաժողովրդական հանդիսութեանց և խաղաղ երթերու ընթացքին ելոյթներով հանդէս եկան Պրնք. Սերոբ Սահակեան (Ապրիլ 23-ի ձեռնարկի հանդիսավար), Յակոբ Անդրեասեան, Գեորգ Հինդլեան, Դաիթ Թերզիպաշեան և Դոկտ. Մինաս Գոճայեան (Գլխ. բանախօս): Ոգեկոչման հանդիսութիւնը վարեց Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան: Պէտք է նշել Դոկտ. Ժորժէր Աւագեանի մասնաշատուկ ջանքերը, որոնց շնորհիւ Իսրայէլեան քաղաքական և հասարակական դէմքեր մասնակցեցան հանդիսութիւններուն և կիսեցին մեր ցան ու խոստացան իրենց կարելի ընել Յեղասպանութիւնը ճանչնալ տալու Իսրայէլի պետութեան կողմէ: